


Հարցեր և
պատասխաններ
COVID-19-ի,
հղիության,
ծննդաբերության և
կրծքով կերակրման
վերաբերյալ



ՆԱԿԱՐԹՈՎՈՐՈՒ ՑԻՒՄՈՒՆ
ՉԱՅՏԱԲՈՒՇՈՒՄՆԱ ԵՎ
ՄՈՒՅՈՒՆՎԱԲԻ ԼԵՎՅՈՒՆ
ՆԱԶՈՏՆԱԾԻՐՈՒ





ԱՐԴՅՈ՞Ք COVID-19- Ը ԱՎԵԼԻ ՄԵԾ ՌԻՍԿ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀՂԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ:

Այս հրատարակությունը պատրաստված է Կրաստանի գրավյալ տարածքներից տեղահանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (UNFPA) Կրաստանի գրասենյակի կողմից՝ հիմնվելով Առողջապահության ամաշխարհային կազմակերպության (WHO) նյութերի վրա: Նորացված տեղեկությունների համար այցելեք՝

who.int
unfpa.org
georgia.unfpa.org
moh.gov.ge
stopcov.ge
ncdc.ge

Ներկայումս, COVID-19 վարակի ազդեցությունը որոշելու համար իրականացնում են հետազոտություններ հղի կանանց շրջանում: Առայժմ քիչ տվյալներ կան, բայց այս փուլում չկա որևէ ապացույց, որը ենթադրում է, որ հղի կանայք այս հիվանդությամբ ավելի մեծ ռիսկի են ենթարկվում, քան ընդհանուր բնակչությունը:

Այնուամենայնիվ, հղի կանանց մարմնում և իմունային համակարգում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով մենք գիտենք, որ որոշ շնչառական ուղիների վարակներ կարող են խիստ ազդել հղի կանանց վրա: Համապատասխանաբար, կարևոր է, որ նրանք ձեռնարկեն նախազգուշական միջոցներ՝ COVID-19- ից պաշտպանվելու համար, իսկ իրենց հնարավոր ախտանշանների մասին (ներառյալ բարձր ջերմություն, հազ կամ դժվարացած շնչառություն) տեղեկացնեն իրենց ընտանեական բժիշկին կամ մանկաբարձին:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը կվերանայի և կթարմացնի այս տեղեկատվությունն ու խորհուրդը, երբ հասանելի կլինեն ավելի շատ ապացույցներ:



ԵՍ ՀՂԻ ԵՄ, ԻՆՉՊԵՐՍ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ COVID-19- ԻՑ:

Հղի կանայք պետք է ձեռնարկեն նույն նախազգուշական միջոցները, ինչպես մնացած մարդիկ, որպեսզի խուսափեն COVID-19-ի վարակից: Դուք կարող եք օգնել Ձեզ պաշտպանվել՝

- ձեռքերը հաճախ լվավանալով ալկոհոլային հիմքով ձեռքերի ախտահանիչով կամ օճառով և ջրով,
- հեռավորություն պահպանելով Ձեր և այլ մարդկանց միջև,
- խուսափելով աչքերին, քթին և բերանին ձեռքերով դիպչելուց,
- պաշտպանելով շնչառական ուղիների հիգիենան: Սա նշանակում է, որ փռշտալիս կամ հազալիս ձեր դեմքն ու քիթը պետք է փակեք թեթևած արմուկով: Օգտագործված անձեռոցիկը անհապաղ նետեք աղբամանը:

Եթե ունեք ջերմություն, հազ կամ դժվարացած շնչառություն՝ վաղ փուլում դիմեք բժշկի: Նախքան բուժհաստատություն գնալը, զանգահարեք և հետևեք ձեր տեղական առողջապահական բաժնի հրահանգներին:

Հղի և նոր ծննդաբերած կանայք, ներառյալ COVID-19-ով վարակվածները, պետք է կատարեն կանոնավոր խորհրդատվական այցեր:

ԱՐԴՅՈ՞Ք ՀՂԻ ԿԱՆԱՅՔ ՊԵՏՔ Է ՍՏՈՒԳՎԵՆ COVID-19- Ի ՀԱՄԱՐ:

Ըստ ԱՀԿ-ի խորհուրդների՝ փորձարկման առումով առաջնահերթություն պետք է ունենան COVID-19-ի ախտանիշ ունեցող հղիները: COVID-19-ով վարակվելու դեպքում գուցե անհրաժեշտ լինի մասնագիտացված խնամք:



ԿԱՐՈՂ Ե COVID-19-Ը ՄՈՐԻՑ
ՓՈԽԱՆՑՎԵԼ ՊՏՂԻՆ ԿԱՄ
ԵՐԵԽԱՅԻՆ:

Մենք դեռ չգիտենք, արդյոք COVID-19 ունեցող հղի կինը կարող է հղիության կամ ծննդաբերության ընթացքում վիրուսը փոխանցել իր պտղին կամ երեխային: Մինչ օրս վիրուսը չի հայտնաբերվել ամնիոտիկ հեղուկի կամ կրծքի կաթի նմուշներում:

ՀՂԻՈՒԹՅԱՆ Դ ՇՆՆԴԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՍԱՆԵԼԻ
ԽՆԱՄՔ Ե ՊԵՏՔ:


Բոլոր հղի կանայք, ներառյալ նրանք, ովքեր ունեն հաստատված կամ կասկածելի COVID-19 վարակ, իրավունք ունեն հատուկ խնամք ստանալ ծննդաբերությունից առաջ, ընթացքում և հետո: Սա ներառում է նախաձննդյան, Նորածնային, հետծննդյան և հոգեկան առողջության խնամք:

Ծննդաբերության անվտանգ և դրական փորձը ներառում է.

- Բուժում հարգանքով և արժանապատվությամբ,
- Ծննդաբերության ընթացքում ցանկալի ուղեկցողի ներկայությունը,
- Պարզ հաղորդակցություն ծննդատների աշխատակազմի կողմից,
- Անզգայացման համար համապատասխան ռազմավարություններ,
- Շարժունակություն ծննդաբերության ցավերի ժամանակ, որտեղ հնարավոր է և ծննդաբերության դիրքի ընտրություն:

Եթե կասկածվում կամ հաստատված է COVID-19, ապա առողջապահության ոլորտի աշխատողները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցները՝ իրենց և մյուսներին վարակվելու ռիսկերը նվազեցնելու համար, ներառյալ՝ ձեռքի հիգիենան, ինչպես նաև ձեռնոցների, զգեստի և բժշկական դիմակների պաշտպանական հագուստի համապատասխան օգտագործումը:






ԿԱՍԿԱԾԵԼԻ ԿԱՄ ՀԱՍՏԱՏԿԱԾ
COVID-19-ՈՎ ՀԴԻ ԿԱՆԱՅՔ
ԱՆՊԱՅՄԱՆ ՊԵՏՔ Է
ԾՆՆԴԱԲԵՐԵՆ ԿԵՍԱՐՅԱՆ
ՀԱՏՈՒՄՈ՞Վ:

Ոչ: ԱՅԿ-ն խորհուրդ է տալիս, որ կեսարյան հատումները կատարվեն միայն այն դեպքում, երբ դրանք բժշկականորեն հիմնավորված են:

Ծննդաբերության տեսակը պետք է ընտրվի անհատապես և հիմնվի կնոջ նախասիրությունների վրա՝ հաշվի առնելով մանկաբարձական ցուցումները:



ԿԱՐՈ՞Ղ ԵՆ **COVID-19**
ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՅՔ
ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐԵԼ:

Այո: COVID-19 ունեցող կանայք ցանկության դեպքում կարող են կրծքով կերակրել իրենց երեխային: Դրա համար անհրաժեշտ է

- երեխային կերակրելու ընթացքում **շնչառական ուղիների հիգիենայի** պաշտպանում, **դիմակ կրել**, որտեղ հնարավոր է,
- ձեռքերը լվանալ երեխայի հետ շփումից առաջ և հետո,
- անընդհատ մաքրել և ախտահանել որևէ մեկի կողմից շոշափվող մակերևույթները:






ԿԱՐՈ՞Ղ ԵՄ ԴԻՊՉԵԼ Դ
ՊԱՅԵԼ ԻՄ ՆՈՐԱԾՆԻՆ,
ԵԹԵ ՈՒՆԵՄ **COVID-19**:

Այո, սերտ կապը և բացառիկ կրծքով կերակրումը երեխային օգնում է բարգավաճել: Ձեզ անհրաժեշտ է աջակցություն, որպիսով

- երեխային կրծքով կերակրելիս պահպանեք շնչառական ուղիների հիգիենան,
- նորածնին պահեք այնպես, որ մաշկ-մաշկին հաղորդակցություն ունենաք,
- կիսեք սենյակը ձեր երեխայի հետ:

Անհրաժեշտ է ձեր ձեռքերը լվանաք երեխային շոշափելուց առաջ և հետո, և մաքուր պահեք բոլոր մակերեսները:



ԵՍ ՈՒՆԵՄ **COVID-19**,
ՇԱՏ ՎԱՏ ԵՄ ՁԳՈՒՄ Դ
ԴԺՎԱՐԱՆՈՒՄ ԵՄ ԿՐԾՔՈՎ
ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ:
Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ:

Եթե COVID-19-ի կամ այլ բարդությունների պատճառով շատ վատ եք զգում երեխային կերակրելիս, ձեզ պետք է աջակցեն երեխային մայրական կաթով կերակրելու այնպիսի եղանակով, որը ձեզ համար մատչելի, հարմար և ընդունելի կլինի

- կերակրում քամած մայրական կաթով,
- կրծքով կերակրման դադարեցում և հետագա վերականգնում (ռելակտացիա),
- կերակրում դոնորական քամած կաթով:



